

ՀԱՅՐԵՆԻ ՎՇՏԻ ԵՎ ՊԱՅՄԱՆ ԳԱԼԻՔԻ ԵՐԳԻՉԸ  
(Դանիել Վարուժանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

ԱՎԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Արևմտահայ պոեզիան Ալիշանից, Պեշիկիթաշլյանից և Դուրյանից հետո ապրեց որոշակի տեղատվութուն: Բանաստեղծութեան մեջ թույլ էին քաղաքացիական շիղը, մաքառման ու ընդվզման ուժը: Առաջին պլան էին մղվել ոչ թե ժողովրդի կյանքի փոթորկուն տարերքի նկարագիրը, որով այնքան բնորոշ էին անցյալ դարի 90-ական թվականները, այլ միտտիկան, անձնական կյանքի ու մանր հույզերի անարյուն պատկերները: Այդ շրջանը հետագայում լավ է քննութագրել Դանիել Վարուժանը<sup>1</sup>:

Հայկական առաջին ցեղասպանութիւնը և նրան հաջորդած տարիների ողբերգական մղձավանդը սթափման ու մաքառման հրամայական պահանջ ներկայացրին հասարակական կյանքին ու գրականութեանը, շիկացրին այնպիսի կենսական հարցեր, որոնք կապված էին հայ ժողովրդի գոյատևման ու նրա պատմական ճակատագրի հետ: Է՛լ ավելի աշխուժացավ ազգային-ազատագրական պայքարը, նոր հունի մեջ մտավ հայրենակային շարժումը, ծնվեցին դյուցազնական հերոսներ, ելք ու ընթացք տրվեցին ազգային հրաբորբ ոգուն, անօրինակ սխրանքներին...

Ու դարասկզբին արևմտահայ պոեզիայում հնչեց խիզախման ու մաքառման երգը, երբ 1901-ին լույս տեսավ «բոցավառ տաղանդի»՝ Սիմանթոյի «Դյուցազնորենը»: Դա առաջին լուրջ շրջադարձն էր, պայծառ ու խիզախ շոշարձակումը պասսիվ ու հայեցողական գրական մթնոլորտում: Ազատատենչ ոգու մղվեզին շեփորումը արձագանքվեց նաև Դանիել Վարուժանի հուժկու պոեզիայում՝ ոչ թե մտքի ու հոգու խեղճութեան լալագին կանչերով, այլ առնական, հզոր, տիեզերական ղողանջներով: Վարուժանի այրող հայրենասիրութեան և ազատատենչ մտքի ճախրանքները գալիս էին վաղնջական ժամանակներից, նրա վսեմ ձայնը հնչում էր դարերի հրեղին մի երեզնափողից, որն արձակում էր ծուխ ու բոց՝ հայկական ավերակված օջախների սրտակեզ տերերի հոգու բոցը... Ազգային ոգու ջահը այն անսպառ լուսարձակն էր, որ արյան կանչերի, արդար վաստակի, խաղաղ ու ստեղծագործ կյանքի անվերջ երազների միջոցով փոխանցվում է սերունդներին, համահնչուն դարձնում նորօրյա իդեալներին, լուսավորում անցնելիք ուղիները: Այդպիսին է մեր պատմութիւնը, այդպիսին է նրա գեղարվեստական տարեգրութունը՝ մաքառման գրականութիւնը: Իրավացի են չուվճ. Քումանյանը, Ղ. Աղայանը և Վրթ. Փափազյանը, երբ Դ. Վարուժանին բնութագրել են որպես «թրքահայ նորագույն ամենալավ բանաստեղծներից մեկը, որ ունի խնամված ու բարձր ոճ, զեղուն, զգացումներով լի էջեր, տոգորված հայրենասիրական և ըմբոստացող ոգով»<sup>2</sup>:

Դանիել Վարուժանի (Զպուքքարյան) կյանքի ողբասկանը բավական տրխուր է ու մշտալի: Սեբաստիայի Բրզնիկ գյուղը, ուր 1884-ին ծնվել է Դանիելը, իր զովասուն ուռնեխներով, պլեղարդ Ալիս գետի ջրերի ու երփներանգ ծա-

1 Տե՛ս «Դրական ասուլիսներ», Կ. Պոլիս, 1913, էջ 25:

2 «Հայ գրողներ», հ. Բ, կազմեցին Ղ. Աղայան, Չուվճ. Քումանյան և Վրթ. Փափազյան, Թիֆլիս, 1910, էջ 613:

գիկնների հեքիաթ աշխարհով գուրգուրել է ապագա բանաստեղծին, նրա հոգին լցրել կախարդական երազներով: Բայց այս ամենը կարճ է տևել: Հայրը պանդրխտում է Պոլիս՝ ընտանիքը թողնելով բախտի քմահաճույթին: Մոլեգնում են համիրյան ջարդերի սարսափները, և 90-ականի հայկական կոտորածների՝ բանաստեղծի խոսքերով ասած՝ «երկինք բարձրացող արյան ալիքը» վարուժանին նետում է ոճիրների ոստանը՝ Պոլիս: Հորը գտնում է բանտի մեջ, ապրում ցավազին գալարումներ, փոթորկվում է նրա մատաղ հոգին... Այս ամենը նա հետագայում դառնագին նկարագրում է «Հորս բանտին մեջ» քերթվածում:

Բերայի Մխիթարյան նախակրթարանում և Քաղքեղոնի վարժարանում սովորելու տարիներին պատանի Դանիելը հաճախ է ակնատես լինում թուրք ջարդարարների զազրելի արարքներին, լսում նրանց աննախադեպ վայրագությունների մատին: Ատեղծության և հակակրանքի, վրեժի ու ցամախ զգացումներն էլ «երազող, խաժակն, հանդարտ և միշտ անխնամ հագնված... զրլուխը շարունակ կախ, միշտ մտածկոտ...»<sup>3</sup> Դանիելին հանում են հոճիք, նա դառնում է ամոզուպ, բողբոջ, կովարար, մի անսանձ գազան...<sup>4</sup>, — վերհիշում է նրա դասընկեր Վահրամ Փափազյանը: Այսպիսի տրամադրություններով էլ հյուսվում են նրա առաջին ստեղծագործությունները՝ «ամեն մի վանկը արյունով ու ըմբոստովթյամբ հորինված»<sup>5</sup>:

Դեռևս 1895—1896-ին Սազը Աղաչիի Մխիթարյան դպրոցում վարուժանի կատարած առաջին բանաստեղծական թոթովանքները առավել ու հիմնավոր շարունակվում են Քաղքեղոնի Մխիթարյան վարժարանում: Այստեղ նրան չափազանց շատ է օգնում նշանավոր մանկավարժ, գրականագետ և թարգմանիչ Արիստակես Քասաբանիսյանը: Վերջինս ոգևորված իր լավագույն սանի բանաստեղծական տաղանդով, վարուժանին, ավարտելուց հետո (1902), ուղարկում է Վենետիկ Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում սովորելու, հանձնարարական նամակում գրելով՝ «Նոր Մկրտիչ Պեշիկեթաշլյան մը կը ղրկեմ, լավ նայեցեք»<sup>6</sup>:

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանն ավարտելուց հետո ուսումնատենչ պատանին փորձում է ընդունվել Լոզանի համալսարանը, բայց չի հաջողվում՝ նյութական միջոցներ ու ցենզ չունենալու պատճառով: Հոգեկան այդ ծանր օրերին նրան աջակցում է գրականագետ և վարժարանի նոր ուսումնասպետ Ս. Որեմյանը, որն օգնում է վարուժանին և՛ ամսագրելու և տպագրվելու, և՛ թոշակ նշանակելու հարցերում: Հայտնի է, որ Դ. Վարուժանը վենետիկյան մամուլի էջերում տպագրած իր առաջին գործերը ստորագրել է Դանիել Չրպուզկեռյան, Չպուզքարյան, Դ. Չպուզքար: Հետագայում, 1905-ին, «Գեղունի» հանդեսում տպագրում է «Սարսուռներ» խորագրով բանաստեղծաշարը՝ Դանիել Վարուժան ստորագրովթյամբ և ամենուր հանդես գալիս այդ ծածկանվամբ:

1905—1909 թվականներին վարուժանը սովորում է Բելգիայի Գանտի համալսարանում, կարդում «Հումբերեն մինչև Մետերլինգ», խորանում արվեստների գաղտնիքներին մեջ, ուսումնասիրում հասարակական-քաղաքական գիտություններ, ծանոթանում բանվոր դասակարգի կյանքին ու պայքարին, առաջավոր գաղափարներով ձևավորում իր աշխարհայացքը: Ստեղծագործական կարելիություններով լի բանաստեղծը, գիտելիքների մեծ պաշարով, բարձրագույն կրթությամբ վերադառնում է ծննդավայր և երկու տարի մանկավարժական եռանդուն աշխատանք է կատարում Սեզաստիայի Արամյան վարժարանում, ապա՝ Սվրդկիայի ազգային ձեռնարանում: Բանաստեղծի համար գրական, մանկավարժական ու հասարակական գործունեությունն թեև տարած ասպարեզ

3 Վ. Փ ա փ ա ղ յ ա ն, Հետագարձ հայացք, հ. 1, Երևան, 1956, էջ 42:

4 Նույն տեղում, էջ 50—51:

5 Նույն տեղում, էջ 52:

6 «Էյմիածին», 1958, № Ը, էջ 35:

բացվեց Պոլսում, ուր նա 1912-ին հրավիրվում է Բերայի վարժարանի տեսչի պաշտոնով: «Մարտուններ» և «Յեղիմ սիրտը» բանաստեղծությունների ժողովածուներին հաջորդեց «Հեթանոս երգերը» ժողովածուն: Ազգային կյանքի զարթոնքին նոր ազդակ եղան հայկական տառերի գյուտի հազար հինգ հարյուրամյա և տպագրության շրջա հարյուրամյա հոբելյանների հանդիսությունները, որոնց ոգեկոչողներից ու կազմակերպիչներից մեկը Դ. Վարուժանն էր: «Գրական ասուխներ» կազմակերպումը և «Նավասարդ» տարեգրքի հրատարակությունը Վարուժանի և նրա համախոհների կողմից նշանակալից երևույթ էին պոլսահայ գրական կյանքում: Վարուժանն այդ տարիներին մի նոր ուժով էր լցված մայր հողի սիրով ու հայրենի եզերքի կարոտով: Զգացումներ, որոնք հյուսեցին «Հացին երգը», գյուղական կյանքի լուսապայծառ պատկերները, քիչ անց պետք է շարունակվեին «Գինիի երգերը» շարքով: Հետո պիտի դրվեր «Հայ հոմերագիրքը»՝ մեր ժողովրդի հոգևոր գանձերի ու հերոսական սխրանքների ոսկե մատյանը: Նորից պիտի փայլատակեր Վարուժանի շքեղ տաղանդը, հնչեր նրա վսեմ ու իմաստալից ձայնը մամուլում, հանդեսներում, հավաքություններում և պլուր, ոգեշնչեր ժողովրդին, լիցքավորեր նրան ազատագրող իրենց ներքով ու մաքառման տենչանքներով, բայց 1914-ին պայթեց առաջին աշխարհամարտը և խառնեց բոլոր երազանքներն ու ծրագրերը: Երկտեղքերը ձեռնարկեցին իրականացնելու արևմտահայության տեղահանման ու բնաջնջման իրենց նողկալի ծրագիրը: Ու երբ վտանգը դամոկլյան սրի նման կախվել էր արևմտահայ մտավորականության վրա, Վարուժանին և մյուս նրշանավոր գործիչներին մտերիմ մարդիկ օգնություն են առաջարկում, խորհուրդ տալիս թողնել Պոլիսը, բայց նրանք մերժում են՝ հավատալով անհավատալիին... 1915-ի ապրիլի 24-ին ձերբակալվում են 235 պոլսահայ մտավորականներ, որոնց մեջ էր նաև Դանիել Վարուժանը: Անատոլիայի խորքերում, Զանդրը գյուղաքաղաքում արստված բանաստեղծը իր մեջ ուժ է գտնում ստեղծագործելու, ազատվելու հույսեր փայփայում: Մինչդեռ վրա հասավ օգոստոսի 26-ի ողբերգական օրը: Դ. Վարուժանին, Ռ. Սևակին և երեք ուրիշ արտորականների տանում են Քունիայի մոտի ձորը, կողպարում և ահավոր խոշտանգումներով սպանում<sup>7</sup>:

Վարուժանը բանաստեղծական առաջին թոթովանքները կատարել է տասներեք տարեկան հասակից: Այդ քերթվածները իրենց վրա կրում են Դուրյանի և Պեշիկթաշլյանի ազդեցությունը: Դրանք սիրտ, հայրենասիրական երգեր են, որոնք բերում էին պատանի Դանիելի տաղանդի առաջին առկաթումները: Իսկ երբ 1906-ին լույս տեսավ «Մարտուններ»<sup>8</sup> բանաստեղծությունների ժողովածուն, այն իր վրա հրավիրեց գրական հասարակայնության ուշադրությունը: Այդ ռզմայլելի բանաստեղծի» «չքնաղ հատորիկը» իրավունք տվեց գրախոսին նկատելու՝ «Վարուժան հայ բանաստեղծության ամենին ինքնատիպ և հրզոր դեմքերեն մին ըլլալու կոչված է»<sup>9</sup>: Իր կոչումը ժողովրդին ծառայելու մեջ տեսնելով, Վարուժանը երգում է նրա մշտամրմուռ վերքերը, տանջալից կյանքը և ազատության տենչանքները:

«Մարտուններ» ժողովածուն բացվում է «Մուսային» քերթվածով, ուր հեղինակը ներկայացնում է իր բանաստեղծական հավատամքը, գծում անցնելիք ուղիները, նախապատրաստում իր անխորտակ նափը՝ կենսական ծովի մեծ փոթորիկներին դիմակայելու: Հայրենիքի նվիրյալի գործերում պետք է որպեսս Աստված բնակվի գաղափարը՝ «աչքերով բո՛ց, թո՛ղչքով լա՛յն», պետք է «ծը-

7 Դ. Վարուժանի կյանքի վերջին ամիսների մասին մանրամասն տե՛ս Ա. Շարուրյան, Անդարձ ճամփա («Գրառեն», 1982, № 8, էջ 74—82):

8 Մինչև «Մարտունների» երևան գալը, Վարուժանը գրել է «Մաղկեփունջ կամ բրգինիկցիի մը նվագները» բանաստեղծությունների ժողովածուն (մանրամասն տե՛ս Վերաբեր, 1974, № 6, էջ 59—64):

9 «Անահիտ», Փարիզ, 1906, № 1—2, էջ 32:

լի վիշտան աղեկեզ», Արուսյանի, Դուրյանի և Պեղիկթաշլյանի լուսերով ողողվեն «մտածումի, զգացումի այս ճամփան»:

Թուրքական արյունոտ յաթաղանը ավերի ու մոխրի էր վերածում արևմտահայ գյուղերն ու օջախները, զրկում նրա տերերին ապրելու իրավունքից: Ատեղության լեռնակուտակ զգացումները թելադրում են բանաստեղծին խորհրդանշական պատկերներով ներկայացնել հայկական ողբերգական կյանքը, հրդեհված օջախների ցասումնալի բողոքը: Հայրենի տնակի, հրկիզված օջախի վիշտն ու մորմոքը, կարոտն ու սերը դառնում են Որբերյանի, Սիամանթոյի, Վարուժանի և ուրիշների բանաստեղծական հողն ու զինարանը: «Մոխիրներուն առջև» քերթվածում Վարուժանը թանձր ու մռայլ գույներով պատկերում է այրված, ավերակված օջախի տերերի ցավատանջ ու անհույս ապրումները, անտարբեր ու անարդար աշխարհի դեմ բանաստեղծի ծառայող, բողոքի ու ցասման խոսքը: Ողբերգական ու սոցիալական նահապարհության շեշտերով են կերտված նաև «Վշտին», «Հիվանդ է», «Ձյունն դագաղ», «Վիժածք» քերթվածները: Երկրի վրա թագավորում է վիշտը, անօգնական մարդը մեռնում է պանդխտության մեջ, նահատակների արյունը ներկել է գետերը, մահվան ուրվականը քրքջում է ագահ... Հայրենի կյանքի ցավատանջ իրականությունը Վարուժանի մեջ երկնում են բանաստեղծություններ, որոնք համիրյան բռնակալության դեմ պայքարի, ըմբոստացման ու վրեժի կոչ էին անում: Վարուժանի պաշտամունքի հերոսներն են քուրդ ավազակների դեմ մարտնչող Երկիրտ Տոնեկը («Երկիրտ Տոնեկ»), և մեռնողներին կյանք պարգևող հայ քոչվեր («Հայ քոչվեր»): Առվի, ջարդերի ու հրկիզումների նկարագրությունները տեղի են տալիս ցասման, վրեժի և ազատության ոգեշունչ պատկերներին:

Վարուժանի բանաստեղծական խոհերը մերթ շփոթում են, մերթ էլ՝ մեղմանում՝ բարու ու լուսի հավատով: Ատեղությամբ լցվելով շարի՝ սատանայի նկատմամբ, որ ինչ-որ տեղ մարմնավորում է աշխարհի զորեղներին, բանաստեղծը փարվում է լուսի, գեղեցկության ու բարու գաղափարին («Ըրագ և խոհ»): Մի այլ տեղում բարոյախրատական դատողություններ է անում՝ խնդճին, հիվանդին ու տկարին օգնելու համար («Տղա՞ք, ներեցեք»): Ինչպես իրավացի նկատել են, այս և ուրիշ քերթվածների վրա նկատվում է Միլիթարյանների ազդեցությունը: Վարուժանը մինչ իր սեփական, ինքնատիպ աշխարհի հայտնագործումը, կրել է նաև Վիկտոր Հյուգոյի և Ադա Նեգրիի ազդեցությունը<sup>10</sup>: Մինչդեռ նրա հուժկու, զորեղ տաղանքը հանձարի արժվային ճախրանքով պետք է նրան վեր բարձրացներ Օլիմպոսի գագաթը՝ իր ժողովրդին տալու հոգու անմար գանձեր... Այդ թուրքի ոսկե սանդուղքը դարձավ «Ցեղին սիրտը» (1909) բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն, որը Վարուժանին բերեց մեծ փառք: «Հայ քնարը բավական ատենն ի վեր չէր հնչեցրեցած այսքան վեհ, այսքան լայնաճախր սավառնումով հնչյուն մը... Դանիել Վարուժան՝ հին դարերեն ու հին տալանդություններն կու գա մեզի Պիտի ըսեի թե՛ ծովերու սրտեն դուրս եկող հրեղեն եղեգի մը փողեն ծնունդ առած առասպելական պատանեկիկ մըն է ան, բոցեղեն մազերով ու արեգակի աչքերով... Ողջույն ուրեմն նորաստեղծյալ հեթանոս ծիրանի հանձարին, դափնեպսակ մաքրափայլ ճակտին, աստված-ընտիր օձյալին»<sup>11</sup>, — գրել է բանաստեղծ, քննադատ և հրապարակախոս Արտաշես Հարությունյանը:

Մ. Մեծարենցի «Միածան» և «Նոր տաղեր» (1907), Վ. Տերյանի «Մթնշաղի անուղիներ» (1908), Վարուժանի «Ցեղին սիրտը», Սիամանթոյի «Վարմիր լուրեր բարեկամես» և «Հայրենի հրավեր» (1909) ժողովածուները այն նշանաձողերն էին, որոնք արգասավորեցին հայոց բանաստեղծությունը ձևի և բովանդակության ինքնատիպության մեջ, գրականություն բերեցին հայկական սարսափների ողբերգական պատկերները, ապստամբ ոգու պոռթկումները, հայրեն-

10 Հ. Ռ շ տ ու Ն ի, Դանիել Վարուժան, Երևան, 1961, էջ 67—72:

11 Մեջին հայրենյաց», Կ. Պոլիս, 1910, № 21, էջ 223:

նի եզերքի անհուն կարտը, խաղաղ ու ազատ օրերի երազանքը, նորովի հայտնաբերեցին մարդկային հոգու գանձերը:

Վարուժանի «Ճեղին սիրտը» ժողովածուում ումանտիկական պայծառ պատկերները հաճախ կառուցվում են ռեալիստական հիմքերի, իրական ազդակների ու մղումների վրա: Փիլիսոփայական գործը մտահղացումները և շքեղ պատկերները, փարթամ և ճկուն դարձվածքները, խիզախ ու փոթորկաշունչ շեշտերը այն հիմնական կիզակետերն էին, որոնք ապահովեցին այդ գրքի անմահությունը: Ժողովածուն բացվում է «Ձոն» հիանալի բանաստեղծությամբ: Վարուժանը, օգտագործելով «Վահագնի ծնունդ» առասպելի պատկերաբառահայտչական միջոցների զինանոցը, երկնել է քերթողական արվեստի մի այնպիսի սքանչելիք, որը լեռնային զանգակ ջրի պայծառ հայելու պես արտացոլում է հայոց անցած դժնդակ կյանքի ու ազատատենչ ոգու պատկերների թանձրույթը: Նաիրյան բանաստեղծը եղեգնյա գրչով երգել է մեր փառքերը, պանդուխտների կարտը, կրակի ու սրի զոհերը, նվիրական օջախը, վրեժի ու պայքարի ոգորումները... Ու եղեգան փողից հորթել է ակունքների սուրբ լույսը, հարսների կարտի ողբը, զոհերին նվիրված բանաստեղծի սիրտը, հայրենի օջախի ծուխ ծխանին և վրեժի ու ցափաման բոցը...

Ու պայքար, պայքար, պայքար երգեցի.

— Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ—

Գրիչս եղա՛վ անթրոց սըրտերու հնոցի...

— Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ—

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.

Ընդ եղեգան փող բոց ելաներ:

Գրքի «Նախերգանքում» ներկայացված է վրեժխնդրության և արդարության աստվածուհի Նեմեսիսին նվիրված երկարաշունչ, պոեմանման քերթվածը, ուր մի նոր ուժով ու հմայքով պատկերված է բանաստեղծի հավատամքը, ներքա խոհերի ու երազների աշխարհը: «Մըբբերկավարս, հրաշլի» քանդակագործ բանաստեղծը հսկայածավալ մարմարից կերտում է, կանգնեցնում Նեմեսիսի արձանը, որի խիստ աշքերի մեջ մուրճը ձեռքին հաղթական բանաստեղծը ճանաչում է իրեն՝ ամբողջ, անթրոց, անթրոցի: Ու դեպի արձանն է գալիս հարտահարված ու ընչազուրկ ժողովուրդը՝ զինված մուրճով, վրեժով ու ցամաքով, գիտակցությամբ՝ ջահակիր... ամարդկային օվկիանն այդ փրփրագոռո՞ ծանանում է «բռնության դեմ ծուփատո՞ուփ» և գոչում.

— Վրե՛ժ, վրե՛ժ, Նեմեսի՛ս:—

Հրաբորը զգացումներով ու մտքերով համարված ամբոխը կոչ է անում Նեմեսիսին՝ «Իջիր մե՛ր մեջ, և բնակե լոկ մե՛ր մեջ», որպեսզի արդարությունը հաղթի, զորանա խաղաղ կյանքը, երեխաները ձուր ծոցիդ մեջ մըկըրտըվին, և ծըծեն... կաթը վաղվան վրեժին»: Սրբատեղի դարձած Նեմեսիսի արձանը ոգեշունչ ազդակ է ուզմիկների թրերը սրելու, բանվորների մուրճերը թրծելու, բռնակալների գահերը սառանելու և նոր կյանք կերտելու համար:

Հայկական ջարդերի օրերին մարում են օջախները, գյուղը՝ փախստական ու անհույս, իր կյանքը հանձնում է ոչ թե մարդուն, այլ «նեղ գալիս», անթաղ թողնելով մորթված դիակները («Մարած օջախ»): Այսպես էլ քրտնաթոր աշխատանքի պահին, երգը շրթին, իր արտում թուրքական յաթաղանից ընկնում է անմեղ գյուղացին. «Գալի՛ եղեռն»: Չկար վկա. «Պիտի վրեժն ով կշռե»: Բանաստեղծական պատումի մուսը, ծանր տողերում ուժգնորեն տրոփում է քերթողի սիրտը, միտքը՝ հրկեզ ու վրեժխնդիր, տալիս է հարցը. «Մինչև ք՞որ իր արյամբ հայ գյուղացին պիտի արտն իր ոտոգե»: Խավաբը որպես սև պատանք պատում է երկիրը, զլուռնին լացող աշքերումն ամպերը թուփ թաշկինակներ կրանան», իսկ տանը սպասում են՝ հոգին կասկածով լցված կինը և զույգ որդիները որբ... Բանաստեղծի կարծիքով այս վրեժի կշռողը Շանթն է:

որ պիտի հասնի, պատժի «գալլի եղեռնի» զորեղներին... Նա հավատում է դրան, հավատում վաղվա վրիժառուներին, բացվող լուսն առավոտներին.

Ո՛չ.— հանուն հայ մոռնչներուն,  
Թափված արյունն անմեղին չի՞ մեռելիք.— Ո՛չ...

Վաղն հողը դուրս պիտ պոռթկա  
Արևուն տակ հասկեր առլի, կյանք մը նոր,  
Նոր և հրակա, հըսկայացած դիակով,  
Բողբոջ մ'առույգ գեղեցիկ,  
Վաղն այս բարի արյուննն վեր պիտ ելլեն  
նաճըմբելով ցորենին  
Նոր Սեբուսի կարմիր կարմիր կակաչներ,  
Ռրոնց արմատը կը դըպչի, պայթման մոտ,  
Վարն հրաբուխի մ'ապագա...

(«Վաղվան բողբոջներ»)

Հայկական եղեռնական դեպքերի ու ողբերգական մոսայ պատկերների բանաստեղծական թանձրույթը «Ջարդը (1895—1896)» քերթվածն է, որը Վարուժանի լայնաճախ մտքի ու հայրենասիրական պոռթկուն զգացումների արգասիքն է: Համիդյան բարբարոս մղձավանջի հետևանքով հայոց աշխարհը հորիզոնից հորիզոն թաղվեց արյան մեջ, «մորթրված Արշալույսները» պատեցին խավարով, ծովեր գոյացան Մայրերի արցունքներից... Ողբի, անեծքի ու լացի գիշերաղբն պատկերներին փոխարինելու են գալիս մեծ հավատով լցված քերթողի՝ վաղվա պայծառ օրվա երազանքների նկարագրությունները: Վարուժանը տեսնում է հայոց Մայրերի արգանդում «նոր Սաղմեր նոր Որդիներու» ձևավորումը, որոնք սպագայի հզոր Առյուծների քայլվածքով, կայծակի ու վրեժխնդրության ծարավով «հայրենիքի Սերը վեհ» իրենց սրտում կկատարեն արծվային թռիչքներ, շանթեր կտեղան զորեղների գլխին, Ազատության դողանքներով կշնչոտեն բացվող Արշալույսները... Լավատեսական իգու բարձր դիրքերից, բանաստեղծը հավատացնում է Մայրերին, որ ինքը լսում է Արշալույսի «վարդահեղեղ գալուստի» ոտնաձայնները, սպասում աբևագալին...

Վարուժանի այս և նախորդ քերթվածներում ումանտիզմը երբեմն ներծծվում է ռեալիստական պատկերների մեջ, երբեմն հանդես են գալիս գիրկընդխառն, երբեմն էլ հաղթում է ռեալիզմը՝ առաջին պլան մղելով իրական կյանքի ցնցող պատկերները: Վարուժանի առաջադիմական, մարտնչող ումանտիզմին հատուկ են գերբնականի դրսևորումները, այլաբանությունները, հիպերբոլան, բացառիկն ու հերոսականը: Դրանք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարից, ըմբոստացումներից, ուժգին պոռթկումներից, ցանկալի ու երազային կյանքից բխած զորեղ խոսքի միջոցներ էին՝ թարմ ու կենսալի: Բնորոշ օրինակ է «Արմենուհի» դրուցազնավեպի հերոսուհու խեղախ ու բացառիկ արարքների նկարագրերը: Բանաստեղծը գտնում է կյանքի պատկերման ճշգրիտ ձևեր, էական ու գրավիչ սյուժեներ, առնական հզոր խոսքի միջոցով թև տալիս, շարժում պատկերը, ստեղծում դրամատիկ խոհերի ու բյուրեղացած զգացումների մի աշխարհ:

Մերժելով ազգային ան գործիչներին, որոնք իրենց հույսը կապում էին նվորպալի և Թուրքիայի ողորմածության և բարենորոգումների հետ, Վարուժանը գիխված ապստամբության պահանջ է դնում, պայքարում է խորտակել ոգու ստրկական կապանքները, վերականգնել հայ ժողովրդի ցեղային հատկանիշը՝ ըմբոստ, առլուծական ոգին: «Կրկեսին մեջ» բանաստեղծաշարում հզոր, «կայծակներու շեղարբով» կերտված երգերում փառաբանվում է հերոսականությունը, հայրենասիրությունը, ազգի վերածննդի լուսավոր գաղափարը: Անձնազոհությունն ու դուստազնականությունը լիցքավորվում են կոնկրետ

ազդակներով, անձնականի ու հասարակականի սերտ միասնութեան և կյանքի կամ մահվան վեհ գիտակցումով փառաբանվում են գննքը, քաջութիւնը, կամքը, մաքառումը, ազատութիւնը... «Առեւանգիչը», «Կովի երթը», «Դուրացողի մը սուրին» և ուրիշ բանաստեղծութիւններում պատկերված հերոսական ու հայրենասիրական շիկացած զգացումները վարակիչ են, և ոտանգահին շեշտերով առկայ են: Համապատասխան սրբազան գործը պահանջում էր բռնապետական կարգերից ազատագրվելու, նոր, ազատ և ինքնուրույն կյանք կերտելու կենսական խնդիր: «Վահագն», «Հայրենի լեռներ», «Ըմբոստանքի շեփոր» քերթվածները հագեցած են ազատութեան, ուժի և քաջութեան փառաբանմամբ և ըմբոստութեան կոչով:

Ընդհատ ոտքի՛.

...Սղեք ուժեղ, շանթածին,

Մրկանունքով հրդոր, սրկրով վրիժառու,

Իբրև ծրնած կյանքն հազար արևու.

Ձեր երակներեն Եփրատի պես թող հոսին,

Եվ ձեր ոտնգերը վառողի բարկ ծուխին

Թող բացվին լայն.—Մ՛ն, ուզեցեք ուզմն արի

Ազատութեան, դնել նժար նժարի

Երկիրը ձեր, ձեր արջան հետ միասին,

Ուզեցեք ջինջ օդն ընդարձակ երկրներին,

Շանթի լույսով վերելքն հնչուն ժայռերու

Մորիկներուն մեջ բախումներն ահարկու,

Հեղեղներուն սիրեցեք երգը հրակա,

Արծալի թևերը մե՛ր վրա, ձե՛ր վրա...

Վարուժանի գեղագիտական հայացքներում նկատելի փոփոխություններ են կատարվում հատկապես երկրորդ գրքից հետո: Եթե «Յեղին սիրտը» ժողովածուի մի շարք բանաստեղծություններում նա պանծացնում էր հեթանոսական կամքի մեծությունը՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարի միտումով, ապա «Հեթանոս երգեր» (1912) նոր գրքում նա ձգտում է իր բանաստեղծությունը տալ համամարդկային հնչեղություն, հայտնաբերել իր փիլիսոփայական և գեղագիտական կոնցեպցիան, հեթանոսական թեմայի արժարժունքով նույնպես լուծել իր ժամանակի այդուզ խնդիրները: Պատկերելով հեթանոս ժամանակների՝ ուժի, սիրո, գեղեցկության, վայելքի ու ներդաշնակ կյանքի բարձր զգացումները, Վարուժանը ուներ որոշակի միտում՝ «փարատել սարսափների մղձավանջը, հայկական հոգեբանությունն ազատել դեմքի ու մահվան համիտենական նախատինքից և ներարկել այն կյանքի բաղամանիստ տարերքներով...»<sup>12</sup>: Վարուժանի պահանջն էր՝ գրականությունը ազգային նեղ սահմանափակումներից դուրս բերել և նրան տալ համամարդկային լիցքավորում: Եվ քանի որ «հեթանոսական ուղղությունը իբրև փիլիսոփայական ու էսթետիկական հայեցողություն ընդհանուր-համաշխարհային էր և լայն տարածում ուներ եվրոպական գրականության և փիլիսոփայության մեջ»<sup>13</sup>, ուստի վաղնջական ժամանակներին դիմելով՝ Վարուժանը հետամուտ էր հոգու գեղեցկության, կամքի մեծության և մարդկային բնավորության վսեմ իդեալը հակադրելու քաղքենիական սահմանափակությանն ու բարոյական տրոհվածությունը: «Հեթանոսական ուղղության» փիլիսոփայական ու գեղագիտական կոնցեպցիան լավագույնս բացահայտված «Նավասարդյուն» բանաստեղծությունում, որը 1914-ին հրատարակված «Նավասարդ» տարեգրքի նպատակների ու դավանանքների սինթեզն էր:

12 Ս. Ս ր ի ն չ ա ն, Դանիել Վարուժան (Պատմա-բանասիրական հանդես, 1974, № 3, էջ 25):

13 Նույն տեղում, էջ 26:

Հանճարդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն  
 Արևափառ,  
 Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ  
 Քնարդ ա՛ռ:  
 Հանո՛ւն Ուլժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհյանն  
 Աստվածներուն,  
 Զահը ձեռքիդ՝ Բագնե Բագին համասփոն՝  
 Հուր և արդուն:  
 Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր  
 Բաժակրդ նուռ,  
 Հետո գոհվող քերթողներուն սրբտին վրա  
 Լեցո՛ւր, լեցո՛ւր:  
 Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Յեղիդ  
 Մարմարեն կուլս,  
 Մե՛նք, Զավակներդ Օգոստափառ, պիտի կերտենք  
 Նո՛ր Արշալույս:

Տեղի էր ունեցել բարբրի անկում: Քաղաքակրթությունը պայմանական էր դարձրել այն, ինչ որ բնական էր, գեղեցիկ: Նա բարոյականի շղարշով՝ քողարկում էր անբարոյականությունը: Փողի, շահի ու սովի զոհ էր դառնում գեղանի կույսը... Եվ բանաստեղծը մարդու ներաշխարհի գեղեցկությունը, բընավորության առինքնող գծերը, մաքուր, անապական սերն ու առնական ուժը բացահայտելու ու պանծացնելու համար դիմում էր հեթանոսական աշխարհի սրբություններին, մեծազոր կենցաղին, ներդաշն մարդուն՝ իր ժամանակվա աղավաղված կեցության մերժման միտումով: Ծառանալով սիրո և պատվի վաճառքի դեմ, ափսոսելով ազգային հերոսական բնավորության ու գեղեցիկ սովորությունների կորստյան համար, Վարուժանը արարում էր քերթվածներ, որոնք իրենց կենսահյուսվածքն էին քաղում «գեղեցիկի ու զորավթյան» աշխարհից, ուր սրբացվում-պաշտվում էին ազատասիրությունն ու անկեղծությունը, ուժն ու հզորությունը, գեղեցիկ մարմնի ու գեղեցիկ հոգու ներդաշնակությունը:

...Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ՛հոգվույն պես.  
 Եվ հեթանոս այդ մերկությանդ ներքև  
 Տառապի՛ մարդն, ու շկրնա դիպչիլ քեզ:

(«Գեղեցկության արձանին»)

Արևապաշտության, լույս գազաթների տենչանքով, ազատության ու ազատ կյանքի բաղձանքներով է համակված «Բեգաս» փոթորկաշունչ քերթվածը: Հրեղեն ձի Բեգասը՝ աղամանդյա թամբով, շանթով հյուսած սանձով, բանաստեղծին տանում է դեպի «Երկնամուխ լեռն սրևուն», դեպի երազների աստղապսակ գազաթը՝ նրա հոգին լցնելով «աստվածացած» թոքք մտքերով:

...Սիրտս տւր հանճարքս կապրի, կըսերմանեմ  
 լիաբուռ.  
 Ի՛նչ որ Արևն ինձ կու տա՝ զայն կուտա միտքս  
 Մարդուն.

...Բեգա՛ս, Բեգա՛ս, այժմ երբ ե՛ս կը պարզեմ  
 Առագաստները Մրտքիս լույսին վըրա ծովացած՝  
 Եվ քնարիս լարերով՝ քու բաշերովը հյուսված՝  
 Կերգեմ  
 Արեգդեմ  
 Ազատութունը Մարդուն, և գերութունն Աստուծո՞ւ...



Վարուժանը պատկերում է բարքերի հեթանոսական ազատությունը, գովերգում բնութիւն տարերքի պես ազատ ու աննախապաշար մարդկային զգացմունքներն ու կրքերը: Ուժի, գեղեցկութեան, սիրո և վայելքի անսքող զգացումները խաչատում են հոգու ուժեղ բռնկումներով, հազարերանգ պատկերների թովչանքով ու հրապուրյուններով:

Վարուժանի նորարարական գեղագիտական սկզբունքը, որ զգալի բանավեճերի առիթ տվեց, երևում էր համարձակ ու խիզախ նպատակադրումներից, դրականութունը մեծ ասպարեզ դուրս բերելու ազնիվ մղումներից: Որոշակի էր բանաստեղծի ձգտումը՝ ազգային և եվրոպական բանաստեղծութունների փոխհարստացման ճանապարհով լուծել «վաղվան գրականության» խնդիրը: «Երկու միջավայր ազդած են վրաս,— գրել է Քեռոյիկին,— Վենետիկը իր թիցիանով և Ֆլանտրը իր Վան-Տեգնեբով: Առաջինին գուլյնեք և վերջնունը բարբարոս իրապաշտութունը հորինած են վրձինս՝ զոր սնափառութունն ունիմ թաթիսած ըլլալու միմիայն հայրենի հողին, որդան կարմիրին մեջ և ծովածուսի արշուներ»<sup>14</sup>:

Սքանչելի աքթ-պոեմի բանաստեղծական ընդարձակ գեղման մեջ («Հարճը») Վարուժանը բացահայտել է դեպի հեթանոսական հեռավոր շրջանը կատարած շրջադարձի հասարակական շարժառիթները:

...Առաքինի քաջության տեղ նենգն այսօր կը տիրե.  
Փոխան տեգին հուլանի՝ պատյանի մեջ դաշուհն է՝  
Ուր կը շողա մութին մեջ, կը ժանգոտի՝ արևին.  
Ոճիրներն այդ խավարի լրոտության մեջ կը դարբնվին  
Մըխոտ ճրագի լույսին տակ ծրուած գունատ մարգերեն:  
Երբ արեգակը նընջե՝ մեղքերն հայնժամ կը գործեն:

Բուրժուական դաժան ու գորշ իրականությունը այսպես էր ներկայանում բանաստեղծին: Երես թեքելով ներկայից, Վարուժանը իր հայացքն էր ուղղում վաղնջական ժամանակներին, փառաբանում Ուժի, Գեղեցիկի և Սիրո դաշնության շրջանը:

«Գողգոթայի ծաղիկներ» բաժնում արդեն բացակայում են գեղեցիկի ու վեհի ումանտիկական շույլ գույները, կան իրական կյանքի հարուցած ողբերգության կապարե նկարագրություններ, ցավագին իրողություններ, սոցիալական անհավասարությունից ծնված դրամատիկ պահեր: Այս շարքի գեղագիտական ու գաղափարական տեղեկները մարմնացնում է «Աստուծո լացը» բանաստեղծությունը, որն իբրև բնաբան կրում է Ռրնանի խոսքերը. «Գեղեցիկ բաները արցունքի մեջ կը ծնանին»: Տառապանքի լացից է ծնվում արարման բերկրանքը: Հետևաբար, մարդկության «նոր Գողգոթայից» երևի պիտի ծնվեն արշալույսի ծաղիկները: Աստված իր ձանձրությունը փարատելու համար փորձեց ստեղծել մի ուրիշ էություն, սակայն այդ արձագանքը եղավ լոկ համր կոտորումն ու կուլը Ոչինչը: Դառնակսկիթ ցավից «սրտաբոսի լացավ» աստված, և նրա հուսահատ արցունքներից գոյացան աստղերը երկնքի:

Մարդկային անսահման տառապանք, վիշտ, շահագործում, սոցիալական անհավասարություն, տանջանք ու զոհողություն, ահա այն հարցերը, որոնք իրենց սրտակեղեք պատկերումն են գտել Վարուժանի «Մեռնող բանվոր», «Բանվորուհին», «Խաբված կուլսեր», «Մպասում» և ուրիշ քերթվածներում: «Վիշապ», «հերջ» մեքենան քամում է բանվորի կյանքի հյուսիքը, դարձնում նրան իր ստրուկը, զոհը, իշխում է տղեղի վրա, իսկ այդ մեքենայի աշխատանքի արդյունքները վայելում են տրիշները: Ո՞րն է ելքը՝ կամ շարժարանք, աղքատություն ու մահ, կամ՝ պաշար և ազատություն: «Դադար», «Անիդխանուհին», «Մայիսի մեկը» բանաստեղծությունները փառաբանում են երկրորդ ուղին՝ պաշարի ու ազատության ուղին: Գողգոթայի ծաղիկները ոչ թե թա-

ուսմունք են, այլ իրենց զոհաբերության գնով տալիս են սերմեր, բյուրանում, դառնում հզոր բանակ, որի ուժից սարսափում են կապիտալի տերերը...

«Հացին երգը» քերթվածների ժողովածուն, որ հափշտակվել էր եղեռնի օրերին, խուզարկության ժամանակ, հրաշքով գտնվեց և Վարուժանի աշակերտների ջանքերով հրատարակվեց 1921-ին: Քաղաքի դժոխային կյանքից դժգոհ բանաստեղծը ընթերցողին տանում է գյուղական մաքուր ու սքանչելի մի աշխարհ, անհուն սեր արթնացնում հողի, երկրագործի աշխատանքի ու հայրենի եզրերի նկատմամբ: Դատարկվում, ամայանում էին արևատահայ գյուղերն ու ավանները, դաշտերը մնում անմշակ ու անբերրի... Վարուժանը պայծառ, ոգեշունչ տրամադրությամբ ու ողմանտիկական լուսավոր պատկերներով երգելով երկրագործի աշխատանքը, ըստ էության կոչ էր անում բոլոր նրանց, ովքեր զանազան պատճառներով թողել էին ծննդավայրը, վերադառնալ հարազատ վայրերը, զբաղվել վար ու ցանքով, հողագործի հալալ ու սրբազան աշխատանքով, բերք ու բարիքով լցնել հայրենի աշխարհը, մանուկների կանչերով թնդացնել լեռներն ու դաշտերը, շենացնել օջախը...

Մեր բանաստեղծներից շատերն են անդրադարձել գյուղական կյանքին ու աշխատանքին: Եվ սակայն Վարուժանն առաջինն էր, որ գյուղական աշխատանքներին նվիրեց մի ամբողջ բանաստեղծաշար, պատկերեց վար ու ցանքից մինչև կալսեին ու ամբարիչը, խորությամբ ցուցադրեց երկրագործի աշխատանքային բերկրանքից մինչև նրա հոգու նվիրական զգացումների ջրվեժային հորձանքը: Ճիշտ է հիմնավորել Ս. Սարինյանը, որ Վարուժանի «Տեստաքերությունը դեպի գյուղական իրականությունը չէր թեղադրված ո՛չ ողմանտիկական փախուստով, և ո՛չ էլ հոգու խռովքը հովվերգական անդորրում փարատելու միտումով: Ժողովրդի հավերժության փիլիսոփայությունը՝ ահա Վարուժանի գեղագիտական կոնցեպցիան: Սա էլ պայմանավորել է բանաստեղծական պատկերի էպիկական կառույցը, իրականության ընկալման էսթետիկական սկզբունքը: Այդ իրականությունը չի ցուցադրում ոչ սոցիալական ներքին հակասություններ և ոչ էլ կրքերի դրամատիկ բախումներ: Դա մի ամբողջական աշխարհ է՝ ժողովրդական կյանքի էպիկական տարբերով»<sup>16</sup>: Այդ «ամբողջական աշխարհը» բանաստեղծի երազանքն էր: Նրա ձգտումն էր տեսնել հայրենի աշխարհը խաղաղ, անվրդով, ստեղծագործ աշխատանքի բերք ու բարիքի վայելքով, կապույտ երկնքով ու լուսածածան գիշերներով: Վարուժանը շատ էր պատկերել թուրքական յաթաղանի զոհ դարձած հայ գյուղացուն, նրա արյան շառափը, հրկիզված օջախները... Ժամանակն էր ողբասացությունից վերադառնալ ժողովրդի գոյություն կենտունակ ու հավերժական երգին, իմաստավորել պարելու խորհուրդն ու գաղտնիքը, բացատել տիրակալների ճնշումն ու հարստահարումը, մերժել զենքի ու արյան գուլբերովը:

«Հացին երգը» բանաստեղծաշարում նկարագրված գարնան զարթոնքի, ձյունից ձորբազատված դաշտերի հրավերքի, աշխատանքային բերկրանքով լցված սերմնացանների և հայրենի բնաշխարհի գեղեցկությունների ողմանտիկական բազմերանգ, շլացուցիչ գույները բերում են վերածնված հայրենիքի դարավոր երազանքների իրականացած պատկերներ, բնությունից ազատագրված մարդու հոգու արծիային ճախրանքներ: Քնարական հերոսը զդաշտի հզոր զավակն է, նա «բրտիրքով մարդարտյա բնության թագն է հյուսեր»: Աշխարհի բարիքներ ստեղծող երկրագործը ազատ ու ինքնավստահ է, երգելով է հերկում արտը, քաջ իմանալով, որ հերկերը շեն ոռոգվի յաթաղանի տակ ընկած հայ շինականի արյունով, այլ՝ օձերի, որ տպանել է հզոր խոփը «անոնց գլխին անցներով»: «Աստվածների պես կանգուն մշակները» հունձքով բեռնրված սալբերի կատարին, «արևն առած ճակտին վրա», տքնանքով արարում են իրենց երջանկությունը «վաղվան հուլառվ», տավարածի սրնգի հրաշք երգը «անհունն անհուն, խաղաղ կը ծփծփա»: Վարուժանը երազ իրականությունների շանկաբեր խոհերը դուրս է բերում հայկական միջավայրից, տարածում է հա-

մայն աշխարհի՛ վրա, ցանկանալով մարդկությանը խաղաղություն, սիրերգություն, բերկրություն, առատություն, երջանկոթյուն:

Հրուսիսային կողմն աշխարհի  
Առատություն թող ըլլա  
Ոսկի ծովուն մեջ ցորյանին  
Հավետ լողա թող գերանդին.  
Ու լայն ամբարի աղուններուն երբ բացվի՝  
Բերկրություն թող ըլլա:  
Հարավային կողմն աշխարհի  
Պտղաբերում թող ըլլա...  
Մազկի՛ մեղրը փեթակներուն,  
Հորդի գինին բաժակներուն.  
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝  
Սիրերգություն թող ըլլա:

(«Անդաման»)

Վարուժանը ումանտիկական ու ռեալիստական երանգների նուրբ շաղախով («Մշակները», «Սայլերը», «Առաջին ծիլեր», «Կամներգ», «Ցորյանի ծովեր», «Հասած արտ», «Գուռը», «Գարնան անձրև») պատկերել է գյուղական աշխարհի թովչանքները, արևային պատկերները, մարդու և բնության անքակտելի կապերը... Բանաստեղծը դառնում է մեծ բնանկարիչ, հայրենի եզերքի անզուգական երգիչ, աշխարհին խաղաղություն ու երջանկություն տենչացող մեծ պատգամախոս:

Դանիել Վարուժանը լցված էր խոր հավատով հայ ժողովրդի ապագայի նկատմամբ. «...Հայը պիտի ապրի հակառակ դահիճներուն, և հակառակ իր առուծի աչքին տակ բուսած կորեկին: Հայը պիտի ապրի՝ ժողովուրդներու սիրազոդ շղթային մեկ ռակի օղակն ըլլալու համար: Այս է մեր բոլորիս հույսը, հույս մը՝ զոր մուրճով կոեցինք ինչպես մեր պապերեն մեկի նիզակը՝ որ նպատակին կզիմեր օդին և արևուն մեջ երգելով»<sup>16</sup>: Այդ հավատով էլ նա կերտեց իր մարգարտաշար պոեզիան, «գիտական ստուգության ենթարկեց բանաստեղծության պոետիկական համակարգը, սահմանեց բառի ու հասկացության ճշգրտությունը, ձևի ներդաշնակությունն ու կառուցվածքի ամբողջականությունը»<sup>17</sup>: Բայց երբեք չհանգստացավ ձեռք բերածով, միշտ որոնեց, ծրագրեր կազմեց, երազեց կատարյալին, բարձրին. «...Բաղձանքս է ապագային մարդերուն նվիրել այնպիսի հզոր երգ մը՝ որ հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալուն գոնե չզղչա»<sup>18</sup>: Այդպիսի «հզոր երգ», այդպիսի հրաշք պոեզիա Վարուժանը ստեղծեց իր կարճատև ստեղծագործական կյանքի ընթացքում, իսկ հայրենիքը իր հոգու բարձունքներում հավերժ կանգնեցրեց մեծ քերթողի անձեռակերտ հուշարձանը:

16 Գ. Վարուժան, նշվ. աշխ., էջ 175:

17 «Պատմա-քննադատական հանդես», 1974, № 3, էջ 33:

18 Գ. Վարուժան, նշվ. աշխ., էջ 158: